ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 ապրիլի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

56
(2906)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԼԻՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Գաղտնիք չէ, որ Երեւանի քաղաքային իշխանությունները ձախողեցին ծառերի փոփոխման գործընթացը: «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը եւ քաղաքային իշխանությունը մտադիր էին առնվազն 2500 ծառ տնկել, որոնցից 150-ը՝ սակուրա: Մինչդեռ քաղաքի պլանավորման մասնագետներ, ուրբանիստներ, գիտնականներ պնդում են, որ ծառահատման համատարած այս գործողություններն արվում են մասնագիտական ոչ լուրջ հիմնավորումներով. ահազանգում են անգամ Երեւանին սպասվելիք էկոլոգիական մոտալուտ աղետի մասին»:

Մի խումբ ակտիվիստների բողոքի ակցիայից հետո Երեւանում ընդհատվեցին սղոցի եւ ծանր տեխնիկայի ձայները. ծառերն առժամանակ չեն հատվելու:

Ընդհատումից հետո ՀՈԱԿ-ը հայտարարեց, որ ծառերի «օրենքով սպանդի» արդյունքում փոփոխվել է 350-400 ծառ, այսինքն՝ նախատեսված ծրագրի գրեթե 12%-ը: Կարճ ասած՝ ձախողումը ձախողման հետեւից:

Այսպիսով՝ ներկայացնենք, թե փոփոխման համար նախատեսված ծառերը որքան արժեն՝ ըստ ՀՈԱԿ-ի կնքած պայմանագրերի:

Ըստ այդմ, նախատեսվում էր ծառերը փոփոխել ալբիցիաներով, գիհի վիրգինյաններով (օճառածառեր), սակուրաներով եւ հուդայածառերով: Ուսումնասիրելով «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գնումները՝ հասկանում ենք, որ բացի այս ծառատեսակներից գնվել են նաեւ այլ ծառատեսակներ, օրինակ՝ ճապոնական բալենի, ճապոնական սոֆորա, ամառային կաղնի, սովորական կատալպա, սոսի՝ արեւելյան: Այս բոլոր ծառերի գնման պայմանագրի արժեքը կազմել է 82 մլն 168 հազար դրամ: Նշված պայմանագրով գնվել է 1080 ծառ:

Հարցական է մնում այն, թե որտե՞ղ եւ ինչպե՞ս են պահվում մնացած ծառերը եւ հետագայում ի՞նչ ճակատագրի են արժանացել:

Ստացվում է, որ քաղաքապետարանի եւ նրա ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ի թեթեւ ձեռքով հատվեցին Երեւան քաղաքի պատմամշակութային ժառանգություն հանդիսացող դարավոր ծառերը, որոնք, ըստ գիտնականների, ճակատագրական կլինեն Երեւանի համար:

Քաղաքապետարանը գնել է նաեւ 15 հազար թուփ՝ ճապկի՝ սպիտակ, 4 մլն 156 հազար դրամ արժողությամբ: Մյուս պայմանագրով գնվել է կիպրոս՝ սովորական եւ լեռնային լոճի թփերի տեսակներ 25 հազար 30 հատ, որոնց արժեքը կազմել է 6 մլն 919 հազար դրամ: Ձեռք է բերվել 14 հազար վարդ՝ 9 մլն 478 հազար դրամ արժողությամբ:

Երեկ արդեն պաշտոնապես հաստատվեց, որ Հայաստանի իշխանությունները սահմանազատման եւ սահմանագծման անվան տակ հերթական զիջմանն են գնալու՝ Տավուշի հատվածում: ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանի եւ ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի նախագահությամբ տեղի ունեցած պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի 8-րդ հանդիպման արդյունքում՝ հանձնաժողովները պայմանավորվել են սահմանազատումը սկսել Տավուշի մարզից: ՀՀ ԱԳՆ տարածած հաղորդագրության համաձայն՝ նախնական համաձայնեցվել են Հայաստանի Բաղանիս, Ադրբեջանի Բաղանիս-Այրում, Հայաստանի Ոսկեպար, Ադրբեջանի Աշաղը Ասկիպարա, Հայաստանի Կիրանց, Ադրբեջանի Խեյրեմլի, Հայաստանի Բերքաբեր, Ադրբեջանի Կըզըլ Հաջիլի գյուղերի միջեւ սահմանային գծի հատվածներում սահմանի անցումը: ՀՀ վարչապետի աշխատակազմից էլ, իբր, «մեկնաբանելով» ԱԳՆ-ի այս հայտարարությունը՝ նշել են, որ սահմանազատումից հետո 4 գյուղերի հատվածում զինված ուժերը հետ են քաշվելու եւ տեղը զիջելու են սահմանապահ զորքերին: Արդյունքում՝ Ադրբեջանի սահմանապահ ծառայությունն ավելի է մոտենալու Կիրանց եւ Ոսկեպար գյուղերին: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ ԶՈՒ ԳՇ նախկին ղեկավար Մովսես Հակոբյանը պնդում է՝ Տավուշի այս գյուղերի հանձնումը 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ փաստաթղթի արդյունք է: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանի առանձնատան վրա արձակված կրակոցների գործը մնացել է օդից կախված: Մեզ հայտնի դարձավ, որ գործով միակ կալանավորվածի խափանման միջոցը փոխվել է, եւ նա ներկայումս տնային կալանքի տակ է: Ու սա էլ դեռ քիչ չէ, միակ կալանավորվածը պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի: Իսկ ահա, նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանը իրավապահներին հայտնել է, որ որեւէ մեկին չի կասկածում իր տան կրակոցների գործով եւ չի կարողանում հասկանալ, թե ով կարող էր նման բան անել: ՀՀ քննչական կոմիտեն, Թաթուլ Ասիլյանից բացի, հարցաքննել էր նաեւ նրա կնոջը: Եվ ահա, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ասիլյանի կինը հայտնել է իրավապահներին, որ կասկածում է, թե Հարություն Հարությունյանն է իր տան վրա կրակել: Ահա, Ասիլյանի կնոջ ցուցմունքի հիման վրա էլ, Հարություն Հարությունյանին կալանավորել են: Սակայն վերջինս պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի: Հիշեցնենք՝ այս տարվա հունվարի 14-ին կրակոցներն էին արձակվել ՔՊ-ից հեռացված Թաթուլ Ասիլյանի տան վրա: Իրավապահների գործողությունների արդյունքում՝ երեկ կալանավորվեց Հարություն Հարությունյանը, որը առավել հայտնի է Ուշանցի Հարութ անունով: Ըստ լուրերի՝ նա Ասիլյանի կնոջ քրոջ ընկերն է:



Ըստ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ ապրիլի 1-ի հաշվետվության հաշվետու ժամանակահատվածում դիմում-գրությունների գերակշիռ մասը վերաբերել է անհամատեղելիության պահանջներին: Դիմումներից մեկը հետեւյալն է. «Արդյո՞ք Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների կողմից վճարովի հիմունքներով այլ աշխատանք կատարելը համատեղելի է իրենց զբաղեցրած պաշտոնին»: Ինչպես «Հանրային ծառայության մասին» օրենքով, այնպես էլ ոլորտային՝ «Տեսալսողական մեդիայի» օրենքով սահմանված են կարգավորումներ՝ անհամատեղելիության պահանջների վերաբերյալ, որոնք կիրառելի են ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ՝ պետության կողմից հիմնադրված կազմակերպությունների աշխատակիցների նկատմամբ՝ պաշտոնավարման ընթացքում: Վերաբերելի իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում՝ Հանձնաժողովը գնահատել է, որ պետահիշխանական գործառույթ իրականացնող բոլոր մարմինները պետք է ապահովեն անհամատեղելիության պահանջների պահպանման միասնականությունը: Հետեւաբար, Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների կողմից իրենց պաշտոններին զուգահեռ՝ վճարովի հիմունքներով այլ աշխատանք կատարելը Հանձնաժողովը գնահատել է անհամատեղելի, ինչպես ԱԺ պատգամավորների դեպքում է:

ՀՀԽ

Հանրային հեռարձակողի խորհուրդ

ԶՐՈՒՅՑ

ՁԻՆՎՈՐԱԳՐՎԵԼ՝ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանը խոսել է ժամանակին Նիկոլ Փաշինյանին աջակցելու և ընդդիմության հետ ունեցած տարաձայնությունների մասին:

-Պարոն Հայրիկյան, Դուք մշտապես Ձեր հարցազրույցներում, գրառումներում դժգոհություններ եք հայտնում, ասում, որ եթե այսօր, պատերազմից հետո իշխանության դեռ Նիկոլ Փաշինյանն է, դրա մեղավորն ընդդիմությունն է, քանի որ միասնական չէ: Կխնդրեմ այս քննադատությունների պատճառից խոսել, ինչո՞ւ ընդդիմությանը չի հաջողվում միասնական օրակարգ ձեւավորել:

-Միշտ չէ, որ դրա մասին խոսում եմ, բայց երբ առիթ լինում է նշում եմ, որ հանրային կյանքում, քաղաքական կյանքում միշտ կա իշխանություն, եթե կա պետություն եւ ընդդիմություն: Եվ եթե իշխանությունը ակնհայտ սխալներ է թույլ տալիս, ապա այստեղ կա նաեւ ընդդիմության մեղքը, որ այդ դժգոհությունների դեպքում չի կարողանում կարեւորագույն հարցի շուրջ հայտարարի գալ:

Մի փոքր անդրադարձ կատարեմ. երբ միայն ԱԻՄ-ն էր եւ կոմունիստական բռնապետությունը, մեր գործը հեշտ էր: Մենք գիտեինք, որ մենք ենք, բոլորը մեզ հետ են, դիմացն էլ կոմկուսն է: Հիմա փոխվել են այդ ժամանակները. մենք պայքարեցինք բազմակուսակցական Հայաստանի համար, ԱԻՄ-ը ինքը տրոհվելով շատ կուսակցությունների աշխարհ գալուն նպաստեց, եւ հիմա դրանց հետ պետք է համաձայնության գալ:

-Դրան խանգարում է քաղաքական ուժերի շատ լինե՞լը:

-Ո՛չ, քաղաքական ուժերի շատ լինելը դրան չի խանգարում, որքան այն որ այդ ուժերը կարեւորագույն հարցերի համար պայքարելիս չեն մոռանում, կամ չեն ուզում մոռանալ, որ կարելի է ժամանակավորապես մի կողմ դնել աթոռակռիվը. դա խանգարում է ընդդիմությանը ընդհանուր հայտարարի գալ:

-Պարոն Հայրիկյան, բայց արդյո՞ք յուրաքանչյուր ընդդիմության վերջնական պատակը չէ տապալել սխալներ թույլ տված իշխանությանը, որպեսզի իրենք ծառայեն պետության շահերին: Բնական չէ՞ սա:

- Բնական է, իհարկե, քաղաքական ուժը պետք է իր ծրագրերն իրականացնի՝ իշխանության գալու ճանապարհով, բայց լինում են դեպքեր՝ համազգային կարեւորության, որ խնդիրն ավելի կարեւոր է, քան քո իշխանության գալու հարցերը լուծելը. օրինակ՝ Հայաստանի անկախությունը, ժողովրդավարության խնդիրը: Քաղաքական ուժերը այս հարցերը մեծ մասամբ կապում են անցումային կառավարության հետ: Մեր դիրքորոշումը այլ է, մենք ասում ենք՝ կա բացարձակ ժողովրդավարության նախագիծ, որը պաշտոնապես ընդունել է 15 քաղաքական ուժ. եկեք սրա շուրջ համախմբվենք, այս կարեւորագույն հարցը լուծենք: Հետո իշխանափոխությունն էլի մնում է, որովհետեւ սահմանադրության ընդունումից հետո, բնականաբար, ընտրություններ լինում են: Ես մի քայլ եմ պլանավարում՝ քաղաքացիներին հրավիրելու՝ որպես ժողովրդավարության աջակցողների պայքարի:

-Այսինքն, փողոցային պայքա՞ր նկատի ունեք:

-Ամեն տեսակի. ե՛ւ իրավական, ե՛ւ փողոցային:

-Միայն Ձե՞ր քաղաքական ուժը:

-Ո՛չ, քաղաքական ուժերն իրենց հերթին, բայց կան մարդիկ, որոնք որեւէ քաղաքական ուժի հետեւել չեն ուզում, բայց հասկանում են, որ հայրենիքի վիճակը բարելավելու համար կարելի է զինվոր դառնալ ինչ-որ գաղափարի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՉԵՆ ԵՂԵԼ

Երեկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հերթական նիստն է արել՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Օրակարգում ապրիլի 5-ի Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բրյուսելյան հանդիպումն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նիստն ընդամենը 1.5 ժամ է տեւել, քանի որ ասելու շատ բան չի էլ եղել:

Սկզբում ելույթով է հանդես եկել Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը, հետո վերջինս պատասխանել է ՔՊ-ականների հարցերին:

Ըստ էության, Արմեն Գրիգորյանի ասածն այն է եղել, որ բացառապես տնտեսական հարցեր են քննարկվել Բրյուսելում: Ախ քարտուղարը նաեւ ակնարկել է, որ թեեւ տնտեսական հետագա համագործակցության նախադրյալներ կան, բայց հանդիպման արդյունքներն այնքան էլ ոգեւորիչ չեն եղել, որքան նախապես ակնկալվում էր:

ՔՊ-ականներն էլ ցնծությամբ չեն ընդունել հանդիպման արդյունքները:

Նիստի վերջում ամփոփիչ կարճ ելույթ է ունեցել նաեւ Նիկոլ Փաշինյանը:

ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԿ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ Արցախի ԱԺ պատգամավորները փակ հանդիպում-քննարկում են ունեցել Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի եւ պետնախարար Արթուր Հարությունյանի հետ:

Քննարկումը տեղի է ունեցել ՀՀ-ում Արցախի ներկայացուցչության շենքում եւ բավականին երկար է տեւել:

Մեր տեղեկություններով՝ Արցախի իշխանությունները քննարկել են բռնի տեղահանված արցախցիների սոցիալական աջակցության ծրագրերը եւ խնդիրները:

Քննարկման ժամանակ մտահոգություններ են հնչեցրել, որ արցախցիների աջակցության համար նախատեսված ռեսուրսները սպառվում են ու առաջիկայում հնարավոր է՝ ամբողջությամբ սպառվեն դրանք, ինչն էլ խոր սոցիալական խնդիրներ է առաջացնելու արցախցիների համար:

Արցախի իշխանությունները մտահոգություն են հայտնել նաեւ, որ այս իրավիճակն ի վերջո կարող է հանգեցնել արցախցիների արտագաղթի:

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Տեղի է ունեցել հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման հանձնաժողովի հերթական նիստը:

Հանդիպմանը Ադրբեջանը ներկայացրել է հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆաեւը, իսկ Հայաստանը՝ Միհր Գրիգորյանը:

Կողմերը համաձայնության են եկել մի շարք հարցերի շուրջ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՉԳԻՏԻ՝ ՈՎ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՈՒՄ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ չի կարող ճշմարիտ համարել Իսրայելի եւ Իրանի հայտարարությունները՝ կապված իրանական տարածքի վրա իսրայելական վերջին հարվածների հետ: Միաժամանակ, նա մեղադրել է ԱՄՆ-ին Իսրայելին աջակցելու մեջ՝ նշելով, որ Վաշինգտոնից այլ բան չէր սպասում:

«Ներկայումս Իսրայելն ու Իրանը տարբեր բաներ են ասում: Չկա պատասխանատվություն, չկա բացատրություն: Ելնելով Իրանի հայտարարություններից՝ չի կարելի ասել, որ նա ճշմարտությունն է ասում: Իսրայելի մասին ընդհանրապես անհնար է ասել»,- Ստամբուլում լրագրողներին ասել է թուրք առաջնորդը:

Նույնը, ըստ Էրդողանի, կարելի է ուղղել ԱՄՆ-ին. «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում մենք տեսնում ենք, որ Ամերիկան Իսրայելի կողմն է: Մինչ բոլորն աջակցում են Պաղեստինին, ԱՄՆ-ն, դատելով վերջին հայտարարություններից, շարունակում է բռնել Իսրայելի կողմը: Մենք այլ բան չէինք սպասում, եւ կրկին հնարավորություն ունեցանք դա ստուգելու»,- նշել է Էրդողանը: Թուրքիայի ԱԳՆ-ն ավելի վաղ կոչ էր արել Իսրայելին եւ Իրանին զերծ մնալ քայլերից, որոնք կարող են հանգեցնել նրանց միջեւ լարվածության՝ վերածվելով մշտական հակամարտության: «Վերջին իրադարձությունների լույսի ներքո ավելի ու ավելի պարզ է դառնում, որ Դամասկոսում Իրանի դեսպանատան վրա Իսրայելի անօրինական հարձակման հետեւանքով առաջացած լարվածությունը մշտական կոնֆլիկտի վերածվելու վտանգի տակ է: Մենք կոչ ենք անում բոլոր կողմերին՝ զերծ մնալ քայլերից, որոնք կարող են հանգեցնել հակամարտության ընդլայնմանը», - ասված է նախարարության հայտարարության մեջ X-ում:

«ՌԴ–Ն, ՆԱԽԿԻՆԻ ՊԵՍ, ԵՐԵՎԱՆԻՆ ԴԱՇՆԱԿԻՑ Է ՀԱՄԱՐՈՒՄ»

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Մոսկվան նախկինի պես Երեւանին իր դաշնակիցն է համարում՝ ոչ միայն իրավական առումով:

«Մենք, այնուամենայնիվ, Հայաստանի հետ դաշնակիցներ ենք: Մենք դեռ մեզ դաշնակիցներ ենք համարում: Իրավաբանորեն մենք դաշնակիցներ ենք, բայց ես կարծում եմ, որ ոչ միայն իրավաբանորեն, եւ որ այնտեղ կան մարդիկ, ովքեր հասկանում են Ռուսաստանի նշանակությունը Հայաստանի անվտանգության եւ տնտեսական զարգացման համար»,- նշել է Լավրովը:

Նա ԱՄՆ-ին եւ Եվրամիությանը մեղադրել է Հայաստանն արագացված տեմպերով Ռուսաստանից պոկելու քայլեր իրականացնելու մեջ՝ դրանք որակելով «լկտի եւ անամոթ գործողություններ»:

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման հարցերով պետական հանձնաժողովների ութերորդ հանդիպման արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին 2024թ. ապրիլի 19-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի ութերորդ հանդիպումը՝ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի եւ ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի նախագահությամբ: Հանդիպման արդյունքում՝ Հանձնաժողովները պայմանավորվել են ներքոնշյալի շուրջ. Սահմանազատման գործընթացի սկզբնական փուլում Կողմերը նախնական համաձայնեցրել են սահմանագծի առանձին հատվածները, անմիջականորեն Բաղանիս (ՀՀ) - Բաղանիս Այրում (ԱՀ), Ոսկեպար (ՀՀ) - Աշաղը Ասկիպարա (ԱՀ), Կիրանց (ՀՀ) - Խեյրումլի (ԱՀ) եւ Բերքաբեր (ՀՀ) - Կըզըլ Հաջիլի (ԱՀ) բնակավայրերի միջեւ՝ Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող իրավաբանորեն հիմնավորված միջհանրապետական սահմանին համապատասխանեցնելու նպատակով:

Սահմանագծի տվյալ հատվածների նկարագրությունը կազմվելու է՝ հաշվի առնելով տեղանքում գեոդեզիական չափումների արդյունքում կատարված կոորդինատների հստակեցումը, որը կձեւակերպվի համապատասխան Արձանագրություն-նկարագրությամբ, ինչը պետք է համաձայնեցվի ու ստորագրվի կողմերի միջեւ մինչեւ 2024 թ. մայիսի 15-ը:

Համաձայնել են, որ կողմերը կդիմեն իրենց Կառավարություններին՝ սահմանագծի համաձայնեցված հատվածներում իրենց սահմանապահ ծառայությունների միաժամանակյա եւ զուգահեռ տեղակայման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել, որ սահմանազատման գործընթացում կառաջնորդվեն Ալմաթիի 1991թ. հռչակագրով: Կողմերը պայմանավորվել են նաեւ տվյալ հիմնարար սկզբունքն ամրագրել Կանոնակարգի նախագծում: Պայմանավորվել են՝ կողմերի կողմից Կանոնակարգի հաստատումից հետո համաձայնեցնել հերթականությունը եւ շարունակել սահմանի բոլոր մնացած հատվածների սահմանազատման գործընթացը՝ ներառյալ անկլավների եւ էքսկլավների հետ կապված հարցերով:

ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՀԱՅԱԴՈՒԼ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ

Ռուբեն Վարդանյանի գրասենյակը հայտարարություն է տարածել. «Ապօրինաբար կալանավորված բարեւար Ռուբեն Վարդանյանի ընտանիքն այսօր հայտարարել է, որ Վարդանյանը հացադուլ է հայտարարել՝ պահանջելով անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել իրեն եւ Բաքվում ապօրինաբար պահվող մյուս հայ բանտարկյալներին»:

Հացադուլը նա սկսել է 2024 թ. ապրիլի 5-ին, որը հաջորդել է միջազգային իրավական չափանիշներին համապատասխան, ժամանակին եւ արդար ու թափանցիկ դատավարություն ապահովելու վերաբերյալ Վարդանյանի եւ նրա փաստաբանի բազմաթիվ դիմումներին: Հատկանշական է, որ հացադուլն սկսելուց հետո դադարեցվել են ընտանիքի հետ նրա հեռախոսազանգերը՝ բացահայտորեն խախտելով միջազգային իրավունքի բոլոր նորմերը: Հարկ է նշել, որ հունվարին սպասվող դատաքննությունն առանց պատճառի տեղափոխվել է մինչեւ մայիս:

Անցած տարի սեպտեմբերին ապօրինի ձերբակալված Ռուբեն Վարդանյանին եւ Արցախի Հանրապետության եւս 7 նախկին ու ներկա պաշտոնյաների առաջադրվել են շինծու մեղադրանքներ՝ քաղաքական դրդապատճառներով: Նրանք բոլորը քաղբանտարկյալներ են:

«Խորապես մտահոգված եմ հորս առողջությամբ եւ վիճակով: Ավելի քան 200 օր մենք չենք տեսել նրան: Ապրիլի 5-ից՝ հացադուլն սկսելուց ի վեր, նրա հետ բացարձակապես կապ չենք ունեցել»,- ասել է Դավիթ Վարդանյանը՝ Ռուբեն Վարդանյանի ավագ որդին:

Վարդանյանի հացադուլը համընկնում է Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցի հետ՝ցույց տալով, թե ինչպես են հայերը շարունակում ենթարկվել էթնիկ զտումների եւ մինչեւ օրս դառնում հետապնդման թիրախ:

Ռուբեն Վարդանյանը չորս երեխաների հայր է: Նա նաեւ ազդեցիկ գործարար է, սոցիալական ձեռներեց ու բարերար: Ամբողջ աշխարհից իր գործընկերների հետ նա ավելի քան 1,5 միլիարդ դոլար է ներդրել տնտեսական զարգացման ոլորտում, մարդասիրական նախաձեռնություններում եւ համաշխարհային կրթական ծրագրերում:

2022 թ. նոյեմբերից մինչեւ 2023 թ. փետրվարը Արցախի Հանրապետության պետնախարարի պաշտոնը զբաղեցնող Ռուբեն Վարդանյանին կեղծ մեղադրանքներ են առաջադրվել: Նրա պահման պայմանները խախտում են միջազգային իրավունքի բոլոր նորմերը: Նրան սպասվում է դատավարություն, որը չի համապատասխանելու միջազգային չափանիշներին՝ հատկապես միջազգային դիտորդների համար դատավարության ու ընթացակարգերի մատչելիության առումով:

Ի լրումն դրա, Ռուբեն Վարդանյանի գործն առանձնացվել է մյուս յոթ քաղբանտարկյալների գործերից՝ հարց առաջացնելով հատկապես նրա՝ քաղաքականապես թիրախավորված լինելու վերաբերյալ:

«Ռուբենի եւ Արցախի մյուս նախկին ղեկավարների ապօրինի կալանավորումը մարդու իրավունքների եւ միջազգային արդարադատության համակարգի կոպտագույն խախտում է, եւ դրան պետք է վերջ դրվի: Այս ամբողջ իրադրության զավեշտն այն է, որ Ադրբեջանը, ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության կոնֆերանսը՝ COP 29-ը հյուրընկալելով, անամոթաբար փորձում է «մաքրագործել» իր միջազգային համբավը: COP-ը մեծ ուշադրություն է դարձնում կլիմայի փոփոխության եւ մարդու իրավունքների փոխկապակցվածությանը, մինչդեռ նրանք, ակնհայտորեն, երկուսն էլ չարաշահում են»,- ասել է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի փոխնախագահ, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության Ընտրող հանձնաժողովի անդամ Փոլ Փոլմանը:

Ռուբեն Վարդանյանի ընտանիքը պահանջում է.

- Անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակել ապօրինաբար կալանավորված բոլոր հայ բանտարկյալներին, այդ թվում՝ Ռուբեն Վարդանյանին:
- Ապօրինի դատավարությունները կայանալու դեպքում պետք է տեղի ունենան մինչեւ մայիսի՝ բանտարկյալների կալանքի ժամկետների լրանալը, պետք է համապատասխանեն համաշխարհային իրավական չափանիշներին, եւ միջազգային դիտորդներին ու լրատվամիջոցներին պետք է թույլատրվի մասնակցել դրանց:

Ադրբեջանի կառավարությունը պետք է անհապաղ մուտքի հնարավորություն տա Միջազգային կարմիր խաչին՝ Ռուբենի եւ մյուս բանտարկյալների վիճակը գնահատելու համար: Պետք է վերականգվի Ռուբեն Վարդանյանի հետ ընտանիքի հեռախոսակապը: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցանկացած խաղաղ համաձայնագիր պետք է ներառի բոլոր հայ բանտարկյալների ազատ արձակումը:

COP 29-ը չպետք է տեղի ունենա Ադրբեջանում՝ առանց նշված քայլերի իրագործման:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԵՎԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ

Մեծ յոթնյակի (G7) երկրները Հայաստանին եւ Ադրբեջանին տեւական խաղաղության հասնելու կոչ են արել եւ հայտարարել էսկալացիայի անթույլատրելիության մասին:

Այս մասին G7-ի երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները հայտարարություն են տարածել:

«Մենք կոչ ենք անում Հայաստանին եւ Ադրբեջանին պահպանել լիակատար հանձնառությունը խաղաղ գործընթացին՝ հասնելու արժանապատիվ եւ հարատեւ խաղաղության՝ հիմնված ուժի չկիրառման, ինքնիշխանության հարգանքի, սահմանների անխախտելիության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների վրա»,- նշվում է հայտարարության մեջ:

G7-ը կոչ է արել Ադրբեջանի իշխանություններին համապատասխան քայլեր ձեռնարկել Լեռնային Ղարաբաղ փախստականների անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի ապահովման համար:

Անդրադառնալով հարաբերությունների կարգավորմանն ուղղված՝ Հայաստանի եւ Թուրքիայի ջանքերին՝ G7-ի դիվանագիտական գերատեսչությունների ղեկավարները կոչ են արել բացել երկու երկրների միջեւ սահմանները:

G7-ի երկրներն են ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Կանադան, Իտալիան, Գերմանիան, Ֆրանսիան:

ՊԱՏՎԻՐԱԿԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Արդարադատության միջազգային դատարանում հայկական պատվիրակության ներկայացուցիչ Շոն Մըրֆին ՄԱԿ-ի դատարանում «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով լսումների ժամանակ հայտարարել է, որ եթե Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության համար սպառնալիք չէր հանդիսանում, ապա ինչո՞ւ 100 հազարից ավել մարդ նախորդ տարվա սեպտեմբերին լքեցին իրենց նախնիների տները:

Նա իր ելույթում նշել է, որ դատական գործի շրջանակներում առկա ապացույցներն ուսումնասիրելով՝ ադրբեջանական ներկայացուցիչները, զարմանալիորեն, չեն կարողանում տեսնել հայ քաղաքացիական անձանց նկատմամբ ռասսայական խտրականությունը հաստատող ապացույցները:

Մըրֆին նշել է. «Ես չեմ քննի նախագահ Ալիեւի բոլոր այն հայտարարությունները, սակայն, օրինակ Ադրբեջանը պնդում էր, որ նախագահ Ալիեւի հայտարարությունը, թե իրենց հիմնական թշնամիները աշխարհի հայերն են, ռասսայական թշնամանքի դրսեւորում չէ: Ադրբեջանը պնդում է, որ այս արտահայտությունը բարեհաճորեն վերաբերում է Ադրբեջանին քննադատողներին կամ նրանց, ովքեր չեն սիրում Ադրբեջանը: Բայց աշխարհի հայեր արտահայտությունը, անշուշտ, չի վերաբերում կոնկրետ երկրի կամ կոնկրետ երկրի ղեկավարությանն ու նրա բանակին: Արտահայտությունն ակնհայտորեն վերաբերում է մի ամբողջ էթնիկ խմբի՝ աշխարհում որտեղ էլ որ լինի»:

Նա հավելել է, որ Ադրբեջանի կառավարությունն ընդհանուր առմամբ քարոզում եւ ատելություն է տարածում էթնիկ հայերի նկատմամբ. «Եթե Ադրբեջանը սպառնալիք չի հանդիսանում, ապա ինչո՞ւ 2023 թվականի սեպտեմբերին ավելի քան 100.000 էթնիկ հայ, այդ թվում՝ 30.000 երեխա, մի քանի օրվա ընթացքում փախան իրենց պապենական հայրենիքից»:

ԻՐԱՎԱԿԱՆ

36 ԿԳ ՈՍԿՈՒ ԳՈՐԾԸ

ԿՀԱՐՑԱՔՆՆՎԻ «ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂ» «ՋԱՊԻ» ՓԵՍԱՆ

Ապրիլի 10-ին Արզավանդի խաչմերուկին 36 կգ ոսկի, 293 միլիոն ՌԴ ռուբլի հափշտակելու դեպքով առեղծվածները շարունակվում են: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 36 կգ ոսկին եւ 293 միլիոն ՌԴ ռուբլի անհետացման գործով իրավապահ համակարգի ուշադրության կենտրոնում է հայտնվել «օրենքով գող» Անդրանիկ Սողոյանի փեսան, որի ավազակ հանքում էլ տարել եւ թաքցրել են մեքենան:

Իրավապահները պարզել էին, որ Ա.Սգն, մի խումբ անձանց հետ, մասնակցել է զենքի գործադրմամբ հարձակմամբ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու նպատակով ստեղծված հանցավոր կազմակերպությանը: Վերջինիս կազմում Ա.Ս.-ն քննությամբ դեռեւս չպարզված աղբյուրից նախապես տեղեկացել է ՌԴ-ում բնակվող անձին պատկանող առանձնապես խոշոր չափի՝ 1.024.000.000 ՀՀ դրամ արժողությամբ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 1.216.000.000 ՀՀ դրամին համարժեք 293.000.000 ՌԴ ռուբլի գումարը մեկ այլ անձի՝ Դ.Հ.-ի կողմից 2024թ. ապրիլի 10-ին ՌԴ-ից «Զվարթնոց» օդանավակայանով ՀՀ տեղափոխելու մտադրության մասին: Հանցավոր կազմակերպության մի շարք անդամների հետ, նշված գույքը զենքի գործադրմամբ բռնություն գործադրելով հափշտակելու նպատակով, նախապես պլանավորել եւ հստակ դերաբաշխել են հանցավոր կազմակերպության անդամներից յուրաքանչյուրի գործողությունները:

Հանցավոր մտադրությունն իրագործելու, մասնակիցների հնարավոր շարժը քողարկելու եւ չբացահայտվելու նպատակով Ա.Ս.-ն եւ հանցավոր կազմակերպության մյուս անդամները 2024 թ. ապրիլի 10-ին Երեւան քաղաքի փողոցներից մեկում կայանված «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի վրայից հափշտակել են պետհամարանիշները, այն ամրացրել են իրենց կողմից շահագործվող «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի վրա եւ ընթացել «Զվարթնոց» օդանավակայանի ուղղությամբ՝ դարանակալելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խաչմերուկներից մեկում:

Արդյունքում՝ վերջիններս «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով, կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի գործադրմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա, ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորների եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝ «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները գնացել են Արմավիրի մարզի գյուղերից մեկում գտնվող հանքի տարածք, ավտոմեքենայով բարձրացել են բլուրների մոտ, որտեղ «Պորշ» մակնիշի ավտոմեքենան թաքցնելու նպատակով, այն կայանել են բլրի մեջ տեխնիկայի միջոցով նախապես իրենց հրահանգով փորված անցքի մեջ եւ նույն տեխնիկայով ավտոմեքենան ամբողջությամբ ծածկել են հողով՝ քողարկելով այն: Այդ ընթացքում հանցավոր կազմակերպության մասնակիցներից մեկը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելու նպատակով, անջատել է տարածքը տեսանկարահանող սարքերի տեսաձայնագրությունների հիշողության կրիչի պարունակությամբ սարքը: Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները հանքի տարածքում գտնվող տարբեր ավտոմեքենաներով դիմել են փախուստի:

Իսկ ահա, հանքի հետ կապ ունի «օրենքով գող» Անդրանիկ Սողոյանի փեսան, որին, դատելով իրավիճակից, իրավապահները կանչելու են հարցաքննության՝ հասկանալու համար իր հնարավոր կապը ոսկին գողացողների հետ եւ առհասարակ ոսկու հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ՝ ՔԿ ԽՑՈՒՄ

«Արմավիր» ՔԿՀ-ի խցերում խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել են արգելված իրեր:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության եւ հատուկ նշանակության բաժնի ծառայողները, նույն վարչության «Արմավիր» տարածքային բաժնի եւ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծառայողների հետ համատեղ ապրիլի 18-ին իրականացրել են հերթական հատուկ միջոցառումները, որոնց շրջանակներում խուզարկություններ են կատարվել հիմնարկի խցերում: Արդյունքում՝ տարբեր խցերից հայտնաբերվել են բջջային հեռախոսներ, բջջային հեռախոսների պարագաներ, ինչպես նաեւ՝ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող այլ իրեր: Ազատազրկված անձանց կողմից արգելված իրերի պահման եւ շրջանառության դեմ պայքարը կրում է պարբերական բնույթ:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ապրիլի 18-ին 63-ամյա հոր անհետ կորելու մասին ոստիկանության Մեղրիի բաժնում հաղորդում է տվել Ալվանք գյուղի բնակիչ 44-ամյա մի տղամարդ:

Նա հայտնել է, որ հայրը՝ Սամվել Ղազարյանը, ապրիլի 13-ին ավանակով գնացել է Կապան՝ գնումներ կատարելու եւ չի վերադարձել: Նաեւ հայտնել է, որ նախկինում ոստիկանություն չեն դիմել, որովհետեւ փորձել են նրան հայտնաբերել իրենց ուժերով:

Ոստիկանության Կապանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Սամվել Ղազարյանը ապրիլի 13-ի ժամը 17:00-ի սահմաններում անտառամիջյան ճանապարհով գնալիս հանդիպել է տարածքում բնակվող կապանցի 35-ամյա երիտասարդին, եւ նրա տանը երկուսով ալկոհոլ են օգտագործել: Այնուհետեւ գտնվելով ոչ սթափ վիճակում՝ սկսել են ինչ-որ հարցի շուրջ վիճել, որի ընթացքում 35-ամյա կապանցին բազմաթիվ հարվածներ է հասցրել 63-ամյա տղամարդուն, ինչի հետեւանքով էլ նա մահացել է:

Ապրիլի 18-ին 35-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է ոստիկանության Կապանի բաժին, որտեղ ընդունել է մեղքը եւ հայտնել, որ սպանելուց հետո 63-ամյա տղամարդուն թաղել է իր այգու տարածքում: Նրա մատնանշած վայրում օպերատիվ-քննչական խումբը հայտնաբերել է 63-ամյա տղամարդու այրված դիակը: 35-ամյա երիտասարդը հայտնել է, որ սպանելուց հետո այրել է դիակը, հետո թաղել:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌԴ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Ավարտվել է Ռուսաստանի Դաշնության երկու քաղաքացիների կողմից Երեւան քաղաքի Թումանյան եւ Մաշտոց փողոցներում խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում իրականացված քննությամբ պարզվել է, որ, ՌԴ քաղաքացի 22-ամյա երիտասարդն իր 19-ամյա ընկերուհու հետ նախնական համաձայնություն են ձեռք բերել խուլիգանական գործողություններ եւ հասարակության նկատմամբ անհարգալից եւ իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու եղանակով շահույթ ստանալու շուրջ եւ այդ նպատակով կատարել են դերաբաշխում:

2023թ. դեկտեմբերի 8-ին՝ ժամը 22:00-ից մինչեւ 23:30-ն ընկած ժամանակահատվածում, նրանցից մեկը, բարոյական նորմերի ակնհայտ կոպիտ խախտումներով բարձրացել է Երեւան քաղաքի Թումանյան փողոցում գտնվող վաճառակետի ցուցափեղկի վրա, որի պատճառով այն կոտրվել է: Ապա հարեւանությամբ գործող վաճառքի կետի ցուցափեղկին շարված մրգերը նետել է աշխատակցի վրա՝ այդ կերպ ստորացնելով վերջինիս, որից հետո մոտեցել է Երեւան քաղաքի Մաշտոց փողոցում գործող ծաղկի վաճառակետին եւ կրկին նույն դրդումներով ծաղիկները նետել է գետնին եւ տրորել դրանք՝ հնչեցնելով հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ:

Նույն ընթացքում վերջինիս 19-ամյա ընկերուհին՝ այլոց ուշադրությունն իրենց խուլիգանական գործողությունների վրա սեւեռելու նպատակով, հայհոյախառն արտահայտություններ է հնչեցրել եւ ամբողջ ընթացքում տեսանկարահանել եւ հասարակության անդամների համար հասանելի սոցիալական հարթակներում հրապարակել է ընկերոջ հակաօրինական եւ հակաբարոյական գործողությունները, քաջալերել դրանք՝ տալով անբարո արարքներ կատարելու նոր գաղափարներ՝ նպատակ ունենալով տարբեր սոցիալական հարթակներում տեղադրված այդ տեսանյութերի դիտումներից շահույթ ստանալ:

Փաստերի հիման վրա՝ 22-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով: Որպես խափանման միջոց՝նրա նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը:

Նախաքննությամբ տվյալներ են ստացվել 19-ամյա աղջկա կողմից թմրանյութ օգտագործելու վերաբերյալ եւ նրա նկատմամբ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշում է կայացվել: Փորձագիտական հանձնաժողովի եզրակացությամբ մեղսագրվող արարքների նկատմամբ աղջիկը ճանաչվել է անմեղսունակ, եւ գնահատվել է, որ նա կարիք ունի հարկադիր բուժման:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 17-ից 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 124 դեպք, որից 10-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՈՉ ՈՔ ՈՏՔԻ ՉԻ ԿԱՆԳՆԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ապրիլի 17-ին Ոսկեպարի մշակույթի կենտրոնում հանդիպում է ունեցել ոկեպարցիների հետ: Երբ Փաշինյանը մուտք է գործել դահլիճ, ոսկեպարցիներից ոչ մեկը ոտքի չի կանգնել: Մարտի 18-ին նույն տեղում կայացած հանդիպման ժամանակ ներկաների կեսը Նիկոլ Փաշինյանին հարգելով՝ ոտքի էր կանգնել: Սա վկայում է ոսկեպարցիների մեջ Նիկոլ Փաշինյանի զրոյացած վարկանիշի մասին:

ԱՊՕՐԻՆԻ ՍԱՐՔԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ

4-5 տարի է, ինչ Հաղարծին գյուղի հարավային ծայրին, սողանքից փակված միջպետական ավտոճանապարհի վրա գործող միջպետական ավտոճանապարհից մի քանի մետր հեռավորությամբ գործում է նախկինում Դիլիջան համայնքի ավագանու անդամ, 2021թ.-ից Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի ընտանիքին պատկանող, ապօրինի սարքված ավտոլվացման կետ: Այն կառուցվել է առանց շինարարական թույլտվության, առանց հողահատկացման: Ինչո՞ւ ոստիկանության Դիլիջանի բաժինը միջոցներ չի ձեռնարկում միջպետական ճանապարհից մի քանի մետր հեռավորությամբ գործող, ապօրինի սարքված ավտոլվացման կետի գործունեությունը դադարեցնելու համար: Այս հարցադրումն ապրիլի 2-ին «Ժողովուրդ» օրաթերթը հղել է ՀՀ ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանին: Ապրիլի 16-ին ոստիկանության Դիլիջանի բաժնի պետ Գուրգեն Խաչատրյանից ստացել ենք տեղեկատվական հարցման պատասխանը, ուր նշված է. «Հայտնվում է , որ հարցման մեջ առկա հանգամանքների վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի կողմից կատարվել են ուսումնասիրություններ, ինչի արդյունքում, իրականացված հարցումներին ի պատասխան՝ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանից ստացվել են փաստեր, որոնց հիման վրա պարզվել է, որ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի հարավային հատվածում առկա, ձեր կողմից նշված ավտոլվացման կետը գտնվում է Տավուշի մարզի Հաղարծին բնակավայրի 1-ին փողոց 87 հասցեի հարակից տարածքում, որը Դիլիջան համայնքի ղեկավարի համապատասխան ակտի հիման վրա տեղադրվել է որպես ժամանակավոր ծածկ՝ առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ապամոնտաժելու պայմանով՝ ելնելով համայնքի գերակա շահերից: Միաժամանակ հայտնվում է, որ շինությունը կառուցված է եղել ինքնակամ, որի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել ինքնակամ կառույց իրականացնող անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, ով տուգանվել է 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով»: Ոստիկանությունը, փաստորեն, չի պատասխանել հարցին, թե ինչու չի արգելում համայնքի ղեկավարի ընտանիքին պատկանող, ապօրինի սարքված ավտոլվացման կենտրոնի գործունեությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

13 ՍՈՒԲՅԵԿՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ամփոփել է 2024 թվականի մարտ ամսվա կատարված աշխատանքը: Այս մասին հայտնում են տեսչական մարմնից:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով իրականացված վերահսկողական եւ/կամ օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացման ընթացքում արձանագրվել է 157 դեպք:

Բուսական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել է 68 դեպք: Իրականացվել է շրջակա միջավայրին պատճառված վնասի 74 հաշվարկ՝ 38.091.496 ՀՀ դրամի չափով:

Հարուցվել է 14 վարչական վարույթ: Կայացվել է տույժ նշանակելու մասին 7 որոշում, նշանակվել 700?000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կարճվել է 5 վարչական վարույթ:

Կենդանական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել է 4 դեպք: Իրականացվել է շրջակա միջավայրին պատճառված վնասի 2 հաշվարկ՝ 26.000 ՀՀ դրամի չափով:

Հարուցվել է 4 վարչական վարույթ: Կայացվել է տույժ նշանակելու մասին 4 որոշում, նշանակվել 140?000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կարճվել է 49 վարչական վարույթ:

Մթնոլորտային օդի եւ ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման եւ պահպանման ոլորտում արձանագրվել է 30 դեպք: Իրականացվել է շրջակա միջավայրին պատճառված վնասի 3 հաշվարկ՝ 18?891?395 ՀՀ դրամի չափով:

Հարուցվել է 27 վարչական վարույթ: Կայացվել է տույժ նշանակելու մասին 24 որոշում, նշանակվել 750.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կարճվել է 3 վարչական վարույթ:

Ընդերքի պահպանության ոլորտում արձանագրվել է 1 դեպք: Հարուցվել է 1 վարչական վարույթ:

Իրականացվել է թվով 6 չափագրման աշխատանք՝ տրավերտինի, բազալտախառն լեռնային զանգվածի եւ ավազանման լեռնայի զանգվածի ապօրինի արդյունահանման դեպքերով:

Հաշվետվությունների սահմանված ժամկետում չներկայացման կամ աղավաղված ներկայացման 15 դեպք է արձանագրվել:

Հարուցվել է 15 վարչական վարույթ: Կայացվել է տույժ նշանակելու մասին 22 որոշում, նշանակվել 900.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կարճվել է 4 վարչական վարույթ:

ԲԸՏՄ ղեկավարի կողմից տրվել է ստուգում իրականացնելու մասին 33 հանձնարարագիր: Իրականացվել է շրջակա միջավայրին հասցված վնասի 20 հաշվարկ՝ 24.249.220 ՀՀ դրամի չափով: Կայացվել է տույժ նշանակելու մասին 38 որոշում, նշանակվել 7.850.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կարճվել է 1 վարչական վարույթ:

Կասեցվել է 13 տնտեսվարող սուբյեկտի գործունեություն՝

- առանց համապատասխան ջրօգտագործման թույլտվության - 12,
- առանց անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետման թույլտվության - 1,

Տրվել է պարտադիր կատարման 11 հանձնարարական՝

- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ - 5,
- ջրային ռեսուրսների օգտագործում եւ պահպանություն - 3,
- հողերի օգտագործման եւ պահպանության - 2,
- մթնոլորտային օդի պահպանության -1:

ՀՀ ԱՆ ՀԿԱԾ է ուղարկվել 32 գործ (բռնագանձման ենթակա գումարի չափը՝ 15.386.202 ՀՀ դրամ):

ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 20.467.982 ՀՀ դրամ:

ԼՈՒՐԵՐ

Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՔՆՆԻՉԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Սամվել Վարդանյանի գործով քննիչը Գոռ Դավթյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե 2022 թվականին ինչ ունեցվածք է ներկայացրել այն ժամանակ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Դավթյանը 2023 թվականի համար:

Այսպիսով՝ 2023 թվականին ներկայացված հայտարարագրում Դավթյանը չի ներկայացրել սեփական անշարժ գույք եւ չի նշել իր հետ բնակվող որեւէ անձի: Այնինչ, Հայաստանի Հանրապետության ընտրողների պետական ռեգիստրից տեղեկանում ենք, որ Գոռ Դավթյանը գրանցված է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում եւ նրա հետ նույն հասցեում գրանցված է եւս 12 անձ:

Դավթյանը տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոց հայտարարագրել է 2 մեքենա՝ VAZ եւ KIA մակնիշների:

VAZ մակնիշի ավտոմեքենան քննիչը նվիրատվություն է ստացել 2013 թվականին, իսկ KIA մակնիշի մեքենան գնել է 2021 թվականին:

Նույն տարվա ընթացքում ձեռք է բերել տրանսպորտային միջոց՝ 2 մլն 430 հազար դրամ արժողությամբ 2005 թվականի արտադրության HONDA մակնիշի մեքենա:

Տարվա ընթացքում առկա 2005 թվականի արտադրության KIA մակնիշի մեքենան վաճառել է 800 հազար դրամով:

Տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտի միջոցները երեքն են եղել՝ HONDA, KIA եւ VAZ մակնիշի մեքենաները:

Քննիչ Գոռ Դավթյանը հայտարարագրել է 3 մլն կանխիկ դրամ: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 6 մլն 685 հազար դրամ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Գոռ Դավթյանը տեղափոխվել է եւ ստանձնել է Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների բաժնի գործուղված քննիչի պաշտոնը:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՀԱՋԱՆԳ

Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ հեռախոսահամարին փաստաբան Վահան Հովհաննիսյանի կողմից ստացվել է ահազանգ, ըստ որի՝ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում առերեւույթ խոշտանգման դեպք է տեղի ունեցել, որի հետեւանքով անձին տեղափոխել են բժշկական հաստատություն: ՄԻՊ-ից հայտնում են, որ ստացված ահազանգի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ արագ արձագանքման խումբն անմիջապես մեկնել է բժշկական հաստատություն՝ իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով:

Ուսումնասիրվում է նաեւ լրատվամիջոցներում եւ սոցիալական ցանցերում նշված միջադեպի առնչությամբ տարածված տեղեկատվությունը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 28 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՉԵՆ ՊԱՏԺՎԻ

Ինչպես նշվում է Քորնելի համալսարանի Caucasus Heritage Watch հետազոտական նախաձեռնության հայտարարությունում՝ Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին այլեւս չկա, այն հիմնահատակ քանդվել է, եւ նշվում է, որ Շուշիի 177-ամյա հուշարձան Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին ավերելով՝ Ադրբեջանը կոպտորեն խախտել է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը:

ArmLur.am-ը կապ հաստատեց փաստաբան Միհրան Պողոսյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ պատիժ է սպասվում Ադրբեջանին դատարանի որոշումը խախտելու համար, վերջինս պատասխանեց, որ ՄԱԿ-ի քրեական դատարանի որոշմամբ պետք է սահմանված լինի պատժամիջոցները, բայց կարծում է, որ նաեւ Հայաստանի քրեական օրենսգրքում նախատեսված կլինեն հոդվածներ, որոնցով որ պատասխանատվություն է նախատեսվում նման գործողություններ կատարելը՝ մշակութայի օջախների ոչնչացնելու համար:

«Ամեն դեպքում ինչ էլ որ սահմանված լինի, կարեւոր է, թե արդյո՞ք պահանջատիրություն կա: Եթե պահանջատիրությունը պետության առումով Հայաստանի իշխանության կողմից ես չեմ տեսնում, բնականաբար որեւէ պատասխանատվության չեն ենթարկվելու այդ կատարած գործողությունների համար: Դա ավելի շատ քաղաքական հարց է, նրանք պետք է հետամուտ լինեն կատարված գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու, բայց ինչպես տեսնում ենք մեր քաղաքական իշխանություններին այդ հարցերը չեն հետաքրքրում: Եթե պահանջատիրություն չլինի, բնականաբար կմնա անպատիժ»- ասաց փաստաբանը:

Հիշեցնենք, որ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի վճռով դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է ապահովել 2020 թվականի հակամարտության հետ առնչություն ունեցող գերեվարված բոլոր անձանց անվտանգությունը, ձեռնարկել բոլոր քայլերը՝ կանխելու ռասսայական ատելության եւ խտրականության հրահրումը, կանխելու եւ պատժելու վանդալիզմի դրսեւորումները հայկական մշակութային ժառանգության նկատմամբ:

ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ԴԻՄԵԼ Է ՆԳՆ

Ապրիլի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կենտրոնական բաժին է դիմել Երեւանի բնակիչ 47-ամյա Սուրեն Շահվերդյանը՝ հայտնելով, որ ապրիլի 6-ին Արագածոտնի մարզի բնակիչ 64-ամյա Վահագն Սիմոնյանը տեսագրություն է հրապարակել, որում իր հասցեին սպառնալիքներ են հնչեցվում, անհիմն մեղադրանքներ ներկայացվում, ինչպես նաեւ զանգահարել է իր անձնական եւ աշխատանքային հեռախոսահամարներին եւ սպառնալիքներ հնչեցրել:

Դեպքի փաստով ոստիկանության Կենտրոնական բաժնում կազմվել են փաստաթղթեր:

Սուրեն Շահվերդյանը Երեւանի Կոնստանտին Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի տնօրենն է:

Նշված Վահագն Սիմոնյանն էլ նախկինում հայտնի «Պոնչն» է:

ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՄՓՈՓԻՉ ԺՈՂՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

«Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի նախագահ եւ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ Վահե Բադալյանի գլխավորությամբ օրերս տեղի է ունեցել «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի մեջ մտնող ֆինանսական կազմակերպությունների տարեկան ամփոփիչ ժողովը: Այն այս տարի հոբելյանական էր՝ նվիրված «Ֆասթ»-ի կայացման եւ զարգացման 30-ամյակին:

Բացման ելույթով հանդես է եկել «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի նախագահ եւ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ Վահե Բադալյանը: Շնորհավորելով հոբելյանի առթիվ եւ ամփոփելով «Ֆասթ Կրեդիտ»-ից մինչեւ «Ֆասթ Բանկ» 30-ամյա էվոլյուցիան՝ Վահե Բադալյանն ընդգծել է, որ «Ֆասթ Բանկ»-ն այսօր իր հաստատուն տեղն ունի Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային համակարգում: Վահե Բադալյանն անդրադարձել է առաջիկա 3 տարվա ծրագրերին եւ նշել, որ «Ֆասթ Բանկ»-ը շարունակելու է թե՛ մասնաճյուղերի քանակի ավելացման, թե՛ վարկային պորտֆելի մեծացման, թե՛ սպասարկման որակի բարելավման, թե՛ կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ հետեւողական աշխատանքը՝ նպատակ ունենալով ամրապնդել իր տեղը Հայաստանի լավագույն բանկերի շարքում:

«Եթե կարճ ձեւակերպենք, մեր հաջողությունը, այն կառուցված է ազնվության վրա՝ ազնիվ հարաբերություններ հաճախորդների, աշխատակիցների եւ գործընկերների հետ: Մեր երազանքը «Ֆասթ Բանկ»-ը համաշխարհային հայկական բանկ դարձնելն է, որը ներկայացված կլինի աշխարհի տասնյակ երկրներում եւ կլինի լավագույնների շարքում: Շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ եւ հաջողություն եմ մաղթում մեզ այս երազանքի իրականացման ճանապարհին», - ասել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահ Վահե Բադալյանը:

Հաջորդիվ ելույթ է ունեցել «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր, «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ խորհրդի նախագահ Ռոման Բադալյանը՝ անդրադառնալով կազմակերպության 2023 թվականի գործունեության արդյունքներին եւ զարգացման ծրագրերին: Նա ընդգծել է, որ «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ-ն շարունակել է հաճախորդամետ քաղաքականությունը, որի շրջանակում ֆինանսական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ներդրվել են նոր ու հարմարավետ ծառայություններ, բարելավվել են արդեն իսկ գործողները: Ռոման Բադալյանը նշել է, որ դա դեռ սկիզբն է, եւ առաջիկայում լայնածավալ ծրագրեր են իրականացվելու? աշխատանքները, մասնավորապես, ծավալվելու են բիզնեսի աշխարհագրության ընդլայնման, Fast Ticket-ի ձեւաչափի վերափոխման եւ Fast Power ծառայության գործարկման ուղղություններով:

Ելույթներով են հանդես եկել նաեւ «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի մեջ մտնող ֆինանսական կազմակերպությունների ղեկավարները՝ ներկայացնելով 2023 թվականի հիմնական արդյունքները եւ 2024 թվականի անելիքները: Անդրադարձ է եղել թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում իրականացված գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշներին: Նշվել է, որ Հայաստանում «Ֆասթ Բանկ» ՓԲԸ վարկային պորտֆելն ավելացել է 60 տոկոսով, մասնաճյուղերի թիվը՝ 3-ով, այժմ առկա է 33 մասնաճյուղ: 2023 թվականից «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն նաեւ վիրտուալ մասնաճյուղ ունի Fastexverse մետատիրույթում, որն իր տեսակի մեջ առաջինն է Հայաստանի բանկային համակարգում, եւ որտեղ կարելի է ստանալ ֆինանսական խորհրդատվություն: Ուկրաինայում բացվել է «Ֆասթ Կրեդիտ» ՍՊԸ առաջին մասնաճյուղը, «Ֆասթ Կրեդիտ»-ի եւս երկու նոր մասնաճյուղ է հիմնվել Մեծ Բրիտանիայում, ընդլայնվել է Անգլիայում գործող FJewellery ոսկերչական զարդերի ցանցը եւ գործունեության շրջանակը: Նախաձեռնվել է Հնդկաստանում վարկային կազմակերպության արտոնագիր ստանալու եւ գործունեություն սկսելու գործընթաց, առաջիկայում քայլեր կձեռնարկվեն վճարահաշվարկային կազմակերպության արտոնագիր ստանալու ուղղությամբ: Ջեկուցվել է նաեւ թվային բանկինգի եւ ֆինթեք լուծումների ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ

ԿԳՈՐԾԻ ՆՈՒՅՆԻՍԿ ՄԵԿ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ

Երեւանի համայնքային մանկապարտեզներում այսուհետ նույնիսկ մեկ երեխայի համար կգործի երկարօրյա ծառայություն: Ծառայությունը վճարովի է, ամիսը՝ 5000 դրամ:

Արդեն շուրջ 100 մանկապարտեզ ունի երկարօրյա խմբեր:

«Բոլոր մանկապարտեզներում հնարավորություն ունենք ներդնելու երկարօրյա վճարովի ծառայություն, որը շատ ծողների մեծ հնարավորություն է ընձեռում մինչեւ աշխատանքային օրվա ավարտը երեխային թողնել մանկապարտեզում: Բոլոր ցանկացողները կարող են դիմել, նկատի ունենալով, որ նույնիսկ մեկ երեխայի համար ծառայությունը կգործի»,- ընդգծում է Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը: Մանկապարտեզներում կան նաեւ կրթական լրացուցիչ վճարովի ծառայություններ: Հիմնականում պարի, օտար լեզուների, կերպարվեստի ու դեկորատիվ արվեստի խմբակներն են: Գումարը մանկավարժին տրամադրվող լրացուցիչ վարձատրության համար է: Այս տարի Երեւանի քաղաքապետարանը նախաձեռնեց նաեւ բոլոր մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում՝ 10-ից 30 տոկոսի չափով: Բարձրացվեց ինչպես դաստիարակների, այնպես էլ սպասարկող ամբողջ անձնակազմի՝ խոհարարից մինչեւ բուժքրոջ աշխատավարձը:

«Գնահատելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների մեր գործընկերների կարեւոր աշխատանքը՝ որոշում կայացվեց վերանայել աշխատավարձերը: Սահմանվեցին նաեւ նոր դրույքաչափեր: Դաստիարակների աշխատավարձն, օրինակ, բարձրացավ մինչեւ 31 տոկոս»,-նշում է Խաչատրյանը: Մանկապարտեզում աշխատող մանկավարժները հնարավորություն ունեն հավելավճար ստանալ նաեւ տարակարգի միջոցով:

Տարակարգ ստանալու համար կարող են դիմել բոլոր այն մանկապարժները, ովքեր արդեն մասնակցել են վերապատրաստումներին:

Հանրակրթության ոլորտում բարեփոխումները շարունակական են: Տարվա ընթացքում սպասվում են նոր նախաձեռնություններ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ռազմագործողությունների հետեւանքով ստեղծված իրավիճակում, Արցախից բռնի տեղահանված բնակչությանը կենտրոնացված կարգով մշակութային միջոցառումների, նախաձեռնությունների շուրջ համախմբելու, օկուպացված շրջանների բնակչության միջեւ ներհամայնքային կապերի, ներմշակութային հաղորդակցության, տարիների ընթացքում ստեղծված մշակութային արտադրանքի պահպանման, ինչպես նաեւ արցախյան մշակույթի պահպանությանն ու հանրահռչակմանն ուղղված միջոցառումների կազմակերպման եւ արտաքին մշակութային քաղաքականության մեջ արցախյան մշակույթի նպատակաուղղված ներկայացման, Արցախյան հիմնախնդիրը ակտիվ պահելու նպատակով, մեր կողմից նախաձեռնվել եւ ստեղծվել է «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Կազմակերպության հիմնական խնդիրն է՝ պահպանել պատմական բարդ ու դժվար ժամանակներում ստեղծված եւ տասնամյակների պատմություն ունեցող Արցախի պետական մշակութային կազմակերպությունները:

«Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպության շուրջ համախմբվել են բոլոր պետական մշակութային կազմակերպությունները, որոնց հետագա գործունեության ապահովման խնդիրը միաժամանակյա լուծելու նպատակով մեր կողմից նախաձեռնվել է իրականացնել հեռուստամարաթոն: Այն հնարավորություն կտա արցախյան մշակույթի պահպանմամբ մտահոգ մարդկանց իրենց ներդրումն ունենալ այս կարեւոր գործում: Հանգանակությունը պետք է նպատակաուղղվի Արցախի մշակութային կազմակերպությունների պահպանմանը, նրանց գործունեության ապահովմանը, արցախյան մշակույթի տարածմանն ու հանրահռչակմանը:

Նշված ծրագրի իրականացման արդյունքում՝ Արցախից բռնի տեղահանված՝ մշակույթի ոլորտի 500 աշխատողներ կապահովվեն աշխատանքով, կլուծվի նրանց զբաղվածության հարցը, իսկ իրենց ընտանիքի անդամները, համայնքը, հազարավոր արվեստասերներ կդառնան ծրագրի անուղղակի շահառուներ:

«Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Փրկենք՝ վաղվա համար» խորագրով համահայկական հեռուստամարաթոնի մեկնարկը տրվել է սույն թվականի փետրվարի 20-ին: Կազմակերպության հիմնական խնդիրն է պահպանել պատմական բարդ ու դժվար ժամանակներում ստեղծված եւ տասնամյակների պատմություն ունեցող Արցախի պետական մշակութային կազմակերպությունները:

Մարաթոնի արդյունքներն ամփոփելու ենք ապրիլի 20-ին ժամը 9:00 - 14:00 Կենտրոն հեռուստատեսության եւ 5 րդ ալիքի ուղիղ եթերում:

Նախաձեռնությանը այս փուլում արդեն իսկ իրենց աջակցությունն են հայտնել Հայ առաքելական եկեղեցին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ), «Հակոբյաններ» համահայկական կենտրոն հասարակական կազմակերպությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միություն (AGBU), «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամն ու մի շարք բարեգործական հիմնադրամներ, կազմակերպություններ եւ պարզապես մշակույթով մտահոգ անհատներ:

Տեսաուղերձներով հեռուստամարաթոնին են միացել եւ իրենց աջակցությունը հայտնել մշակույթի եւ սպորտի ոլորտների մի շարք ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական գործիչներ՝ Հայաստանի վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանը, ծանրամարտի աշխարհի չեմպիոն Նազիկ Ավդալյանը, լրագրող եւ մեկնաբան Արտյոմ Երկանյանը, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Արա Գեւորգյանը եւ այլք/:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳՈՅ»-Ը ԼԱՎ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ

«Գոյ» թատրոնից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել են, որ թատրոնի հետ կապված գործերը հօգուտ իրենց են ընթանում:

Հիշեցնենք, որ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերակազմավորման ձեւով միացվել էր «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը, ինչից հետո «Գոյ» թատրոնն ամբողջ անձնակազմով բողոքի ակցիաներ իրականացրեց ԿԳՄՍՆ-ի դիմաց, ինչին էլ հաջորդեց անժամկետ նստացույցը, որը հիմա դադարեցված է:

Թատրոնի ռեժիսոր Սարգիս Արզումանյանն ասաց, որ առաջիկայում կարելի է սպասել լավ լուրերի:

«Բանակցությունների փուլում ենք: Շատ կարեւոր ու լուրջ աշխատանքներ են տարվում: Կարծես թե դրական տեղաշարժ կա այն մասով, ինչ պահանջ կար մեր կողմից: Ամեն բան քննարկում ենք, որ օրենքի շրջանակներով անենք ամեն բան: Մոտ ժամանակներս հնարավոր է, որ հայտարարություններ անենք կամ մամուլի ասուլիս հրավիրենք»,- ասաց Արզումանյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ

Կոմպոզիտոր, երաժշտական պրոդյուսեր Անդրանիկ Բերբերյանը «Անահիտ» 4-րդ մրցանակաբաշխության շրջանակում արժանացել է մրցանակի՝ «Ֆիլմի լավագույն երաժշտություն» անվանակարգում: Նա մրցանակը ստացել է Օսկարի առաջադրված «Ամերիկացի» (2022, ռեժիսոր՝ Մայքլ Գյուրջյան) ֆիլմի երաժշտության համար: Նույն անվանակարգում առաջադրված էր նաեւ կոմպոզիտորի «Յաշան եւ Լեոնիդ Բրեժնեւը» (2023, ռեժիսոր Էդգար Բաղդասարյան) ֆիլմի երաժշտությունը: Վերջին ֆիլմն արժանացել է Լավագույն հնչյունային ձեւավորում մրցանակին, հնչյունային ձեւավորումն իրականացրել է Բերբերյանի Berberyan Produčtion Studios-ը՝ի դեմս Տիգրան Կուզիկյանի: Լավագույն վավերագրական ֆիլմ անվանակարգում մրցանակ ստացավ «Արշալույսի լուսաբացը» (2022, ռեժիսոր՝ Իննա Սահակյան), որում եւս հնչում է Բերբերյանի հեղինակած երաժշտությունը:

«Յուրաքանչյուր ֆիլմ եզակի ճանապարհորդություն է դեպի մարդկային զգացմունքների չբացահայտված ոլորաններ: Ես խորապես երախտապարտ եմ մրցանակաբաշխության ժյուրիի անդամներին՝ կատարված աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու համար: Առանձնակի ուրախ եմ, որ իմ եւ մեր ստուդիայի աշխատանքներն ընդգրկված էին «Անահիտ»-ի տարբեր անվանակարգերում, եւ արժանացել են մասնագետների բարձր գնահատականի: Շնորհակալ եմ իմ թիմակիցներին, եւ բոլոր նրանց, ովքեր նպաստել են այս հաղթանակին»,-նշել է Անդրանիկ Բերբերյանը: Հավելենք, որ «Ամերիկացի» ֆիլմի երաժշտությունը ձայնագրվել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կողմից՝ի դեմս մաեստրո Էդուարդ Թոփչյանի եւ գլխավոր մենակատար՝ ջութակահար Անուշ Նիկողոսյանի:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻ ԶՈՒՅԳԵՐԸ

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի կիսաեզրափակիչ դուրս եկած թիմերը հայտնի են:

Իտալական «Ատալանտա»-ն մրցելու է ֆրանսիական «Մարսել»-ի, իսկ իտալական «Ռոմա»-ն ուժերն է չափելու գերմանական «Բայեր»-ի հետ:

Կիսաեզրափակիչի առաջին հանդիպումները կկայանա մայիսի 2-ին, իսկ պատասխան խաղերը՝ մայիսի 9-ին:

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակիչը կկայանա Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում մայիսի 22-ին:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԿՍՈՒՄ ԵՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը սկսում է պայքարը Եվրոպայի առաջնությունում:

Մրցումային հերթական օրը՝ ապրիլի 19-ին, Հայաստանն ունի երկու ներկայացուցիչ:

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում ընթացող Եվրոպայի առաջնությունում Հայաստանի ընտրանու կազմում ապրիլի 19-ին պայքարի մեջ կմտնեն 60 կգ քաշային Արթուր Սահակյանը եւ 75 կգ քաշային Վախթանգ Հարությունյանը: Սահակյանի մրցակիցը Վրաստանի, իսկ Հարությունյանինը՝ Հունգարիայի ներկայացուցիչներն են:

Եվրոպայի առաջնությունը վարկանիշային չէ Փարիզի Օլիմպիական խաղերի համար:

ՈՎՔԵՐ ԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Հայտնի են «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի 2024 թվականի սիրողական մրցաշարի Գեղարքունիքի մարզային փուլի հաղթողները:

Ինչպես տեղեկանում ենք Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, 2024 թվականի ապրիլի 17-ին եւ 18-ին Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցում տեղի են ունեցել «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի Գեղարքունիքի մարզային փուլի մրցումները, որին մասնակցում էին մրցաշարի համայնքային փուլի մրցումներում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցական թիմերը: Թիմերի կազմում ընդգրկված էին նույն դպրոցի 2 տղա եւ 2 աղջիկ:

Մարզային փուլի մրցումներն անցկացվել են կիսաօլիմպիական համակարգով, որի դեպքում թիմը երկու անընդմեջ պարտությունից հետո դուրս էր մնում հետագա պայքարից:

Մրցումներն անցկացվել են 2 տարիքային խմբերով: Առաջին տարիքային խմբում ընդգրկված էին 5-9-րդ դասարանների, իսկ երկրորդ տարիքային խումբում՝ 10-12-րդ դասարանների աշակերտները:

● Ապրիլի 21-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կբեմադրվի «Լորենցաչչո» իրոնիկ տրագեդիան: Տոմսերի արժեքը՝ 2000-3000, 4000-5000 դրամ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՐԿ

ՀԱՐՑ. Հողի հարկի եւ գույքահարկի համար ի՞նչ արտոնություններ են գործում:

Ռաֆայել Նալբանդյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հողի հարկից ազատվում են «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անձինք նույն հոդվածով նախատեսված դեպքերում: Հողի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված անձինք նույն հոդվածով նախատեսված դեպքերում: Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար հողի հարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:

Գույքահարկի գծով արտոնությունները սահմանված են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով:

ՀՀ ՏԿԵ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը: Հաշվետու տարվա ընթացքում արտոնություն ունեցող գույքահարկ վճարողը գույքահարկը վճարելուց ազատվում է այն ամսվա 1-ից, երբ առաջացել է արտոնության իրավունքը: Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՐՑ. Եթե որեւէ տարվա ընթացքում հայտարարատու պաշտոնը դադարեցնելուց հետո անձը կրկին ստանձնում է հայտարարատու պաշտոն, ի՞նչ հայտարարագիր է ներկայացնում:

Գեւորգ Սարգսյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե հայտարարատու պաշտոնատար անձը պաշտոնի դադարեցումից հետո՝ 30 օրվա ընթացքում, նշանակվում է նոր հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում, ապա պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու եւ ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն չունի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե տվյալ տարվա ընթացքում պաշտոնի դադարեցման եւ պաշտոնի ստանձնման միջեւ տեւողությունը 30 օրից ավելի է, ապա պետք է ներկայացնի միայն պաշտոնը դադարեցնելու հայտարարագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Դոհայում ընթացող աշխարհի գավաթի խաղարկության օղակների վարժությունում Վահագն Դավթյանը հավաքեց 14.833 միավոր, նա զբաղեցրեց առաջին հորիզոնականը եւ նվաճեց Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի ուղեգիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________

Ազգանուն՝ ________________

Առաքման հասցե՝ ________________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+4 +5 / +15 +20
Կոտայքի լեռներ	+2 +5 / +15 +19
Կոտայքի նախալեռներ	+8 +10 / +20 +22
Գեղարքունիք	+2 +5 / +15 +18
Լոռի	+5 +7 / +22 +25
Տավուշ	+7 +10 / +23 +26
Արագածոտնի լեռներ	+2 +5 / +14 +18
Արագածոտնի նախալեռներ	+7 +9 / +19 +23
Արարատ	+10 +12 / +25 +27
Արմավիր	+8 +10 / +25 +27
Վայոց ձորի լեռներ	+2 +4 / +15 +19
Վայոց ձորի նախալեռներ	+10 +13 / +24 +27
Սյունիքի հովիտներ	+8 +11 / +24 +26
Սյունիքի նախալեռներ	+4 +8 / +18 +21
ԼՂՀ	+2 +7 / +17 +20
Երեւան	+13 +15 / +20 +22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԳ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*